

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՕՍՔ

Արտի խոր գոհունակութեամբ իմացանք, որ Յուլիս ամսոյս 11-12-ին (1996) Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքական Աթոռի երկրորդական 535-ամեակի առթիւ Պատրիարքարանը կազմակերպած է Վարդավառի տօնին նուիրուած Գիտաժողով Ստամպուլի մէջ:

Զերմօրէն եւ բարձրօրէն կը գնահատինք այս մտածումը, որով պիտի ջանաք լուսարձակի տակ դնել Հայաստանեայց եկեղեցւոյ ամենէն հարազատ աւանդութեան պատկանող տօներէն մէկը Պայծառակերպութիւն անունով կոչուած եկեղեցականօրէն եւ Վարդավառ անունով նանչցուած ժողովրդականօրէն: Աշխարհի բոլոր եկեղեցիներուն մէջ միակ եկեղեցին է Հայոց Առաքելական եկեղեցին, որ բարձրագոյն աստիճանի յարգանքի արժանացուցած է Յիսուսի կեանքին այդ երաշխան դէպքը, զայն դասելով հինգ գերագոյն տօներու «Տաղաւարներու» շարքին:

Մեր հայրերը Սուրբ Գրական, Աստուածաբանական, ծիսական գրականութեան մէջ լայն տեղ են յատկացուցած Վարդավառի Տօնին, յատուկ «նառ»երով եւ մեկնաբանական գրականութեամբ ու մանրանկարչական արուեստով:

Մեզի համար յատուկ ուրախութիւն կը պատճառէ Ձեր ձեռնարկը՝ գիտական լայն եւ խոր վերլուծումի ենթարկելու մեր Ս. Եկեղեցւոյ այդ եզակի աւանդութիւնը վերստին լուսաբանելով անոր Ս. Գրական, Աստուածաբանական, ծիսական, ազգագրական եւ մատենագրական երեսները եւ արժէքները:

Կը շնորհաւորենք բոլոր գիտնականները, որոնք այս առիթով իրենց կարեւոր նպաստը պիտի բերեն գիտաժողովին:

Կ'աղօթենք առ Բարձրեայն Աստուած, որ Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռը օրէց օր առաւել եւս ծաղկի եւ բարգաւաճի եւ առատաբոխ հոգեւոր բարիքներով զօրացնէ մեր սիրեցեալ ժողովուրդը:

Ողջ լեւուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

09.07.96.